քարիա Վ., որ եւ կոչի Զաքէոս, եղեւ ապա Պատրիարք Հայոց ի Կ. Պոլիս ի թուականին ՌՀԶ (= 1627), եւ յետոյ վախճանեալ թաղեցաւ ի գերեզմանատանն Իւսքիւտարու։ Որոյ տապանաքարն ոչ ունելով գիր, յետ ամաց բազմաց ի լինել Ղափանցի Գէորգ Վ.ին Պատրիարք ի թվականին ՌՄ (= 1751) նա զտապանաքար սորին նորոգել կամելով, եւ զթիւ վախճանին ոչ գիտելով, ի յիշատակէ վերոյիշեալ արծաթեայ խաչի նորին հանեալ, գրել տուեալ է ի վրայ քարին զթվականն զայն, որ ոչ է այնպէս։ Զի է այն թվական շինուածոյ եկեղեցւոյն եւ ոչ վախճանի նորին..։ Եւ յետոյ ի հիմանէ շինեցաւ սա ընդ եկեղեցւոյ Սրբոյ Խաչին ի ժամանակս Յովհաննու Պատրիարքին Կ. Պոլսոյ Կոլոտ կոչեցելոյ, ի թվականին Հայոց ՌՃՀԶ (= 1727)։ Եւ անդ մօտ ի նա գոյ վանք ընդարձակ յանդիման եկեղեցւոյն։ Եւ է սա բնակութիւն միաբանիցն սրբոյ Երուսաղեմի, գոլով բուն ստացուած վանաց Սրբոյն Յակոբայ՝ որ յԵրուսաղէմ։ Ունի առընթեր իւր վանքս այս եւ այգի մի մեծ եւ վայելուչ, հաստատուն որմովք շրջապատեալ, եւ է ի հիւսիսոյ կողմանէ, եւ հայի վանքն ի վերայ նորին, եւ յայնկոյս միոյ կողման որմոյ այգւոյն կայացեալ է գերեզմանատունն Հայոց լի ծառատնկօք։„

Զաքարիայի դամբանը կը գտնուի այժմ Սկիւտարի ազգային գերեզմանատան վարի թաղը, Աստուածատուր Պատրիարքին քով։